Չորրորդ համագումարը լիազօրում է Ազգային Խորհրդին՝ կազմակերպել Զինուորական Շտաբ, նախ՝ ինքնապաշտպանութեան գործը ղեկավարելու եւ ապա՝ համագումարից յետոյ, Ղարաբաղի քաղաքական ուղեղիծը առաջ տանելու համար, առանց Ղարաբաղը Ադրբէյջանին դիջելու:

Համագումարից յետոյ, Բաքուի եւ Շուշուայ անգլիական ներկայացուցիչները, բացարձակ փոխում են իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ եւ ամէն կերպ աշխատում են Ղարաբաղը ենթարկել տալ Ադրբէյջանին:

Բաքուի անգլիական հրամանատարը, գրաւոր առաջարկ է անում Ղարաբաղի Ազգային Խորհրդին հետեւեալ բովանդակութեամբ.—

1.— Ղարաբաղը ժամանակաւորապէս ենթարկւում է Ադրբէյջանի զեներալ նահանգապետին, որը նշանակւում է անգլիական հրամանատարութեան համաձայնութեամբ:

2.— Ժամանակաւոր նահանգապետին կից հիմնւում է Խորհուրդ:

3.— Հայկական մասերում, թէ՛ քաղաքում եւ թէ շրջաններում, նշանակւում են Խորհրդի կողմից հայ պաշտօնեաներ:

4.— Ոչ մի դէպքում հայ ժողովուրդը չի զինաթափւում:

5.— Հայերն ու թաթարները ապահովում են իրենց երկրամասով անցնող ճանապարհների ազատ հաղորդակցութիւնը:

Ազգային Խորհուրդը այս գրութեանը գրաւոր չի պատասխանում, այլ իր ներկայացուցչի միջոցով յայտնում է Բաքուի Ազգային Խորհրդին, որպէսզի վերջինս հաղորդէ Բաքուի անգլիական հրամանատարին, որ Ղարաբաղի Ազգային Խորհուրդը, չորրորդ համագումարի որոշումներից դուրս դալ չի կարող:

Ադատաժի Կ. Կոմիտէն կուսակցական ճանապարհով իր գրաւոր ղեկուցումն է ուղարկում Ոսկանապատի Կ. Կոմիտէին եւ մանրամասն դրի առնելով Ղարաբաղի վերջին անցուդարձերը, խնդրում է հարկաւոր միջոցները ձեռք առնել՝ Բաքուի անգլիական հրամանատարի վրայ ազդելու եւ Ղարաբաղի խնդիրը լուծելու համար:

Համաձայն 4-րդ համագումարի որոշման, Ազգային Խորհուրդը Զինուորական Շտաբ է կազմակերպում:

Այդ օրերին, «Ադատաժ» չաբաթաթերթը դադարել էր: Զինուորական Շտաբը, «Արցախ» չաբաթաթերթն էր հրատարակում, Յ. Ստեփանեանի եւ Կ. Իսախանեանի խմբագրութեամբ:

Երբ Շուշուայ Ազգային Խորհուրդը, անգլիական հրամանատարի դրութեանը Բաքուի Ազգային Խորհրդի միջոցով է պատասխանում, անգլիական հրամանատարը, Ադրբէյջանի շահերը ուելի ուժեղ պաշտպանելու համար, 1919 թ. Փետրուարի վերջերին 400 անգլիական զինուորներ ուղարկում է Շուշի՝ Մայոր Մոկմէդէնի գլխաւորութեամբ: Զօրամասը տեղաւորւում է հայկական թաղում:

Բաքուի Ազգային Խորհուրդը եւ Ոսկանապատի Կ. Կոմիտէն, կարողանում են յաջողցնել եւ Մայոր Մոկմէդէնի հետ Շուշի ուղարկել երկու ներկայացուցիչ՝ Գերասիմ Բալայեանին եւ Լեւոն Զարիֆեանին:

Երկու ընկերները մանրամասն ղեկուցում են տալիս իրենց միսիայի եւ դրսի աշխարհում տեղի ունեցող անցուդարձի մասին:

Նրանք եկել էին տեղում Ղարաբաղի խնդիրը ուժեղ կերպով պաշտպանելու:

Այդ ընկերների եւ Մոկմէդէնի դալուց յետոյ, Շուշում սկսւում են բանակցութիւնները՝ երկու ներկայացուցիչների, Մոկմէդէնի եւ Խոսրով բէկ Սուլթանովի միջեւ: Սակայն այդ բանակցութիւնները ոչ մի արդիւնք չեն տալիս, որովհետեւ անգլիական միսիայի կողմից Մոկմէդէնը առաջարկում է՝ Գ. Բալայեանին եւ Լ. Զարիֆեանին, ստորագրել մի յայտարարութիւն, ըստ որի հայկական Ղարաբաղը մինչեւ Զաբուղ ժամանակաւորապէս յանձնւում է Ադրբէյջանին: Հայ ներկայացուցիչները՝ մի չարք պատճառաբանութիւններ բերելով, հրաժարւում են այդ յայտարարութիւնը ստորագրելուց:

Անգլիական միսիան, Խ. Սուլթանովի ցանկութեամբ, երկու հայ ներկայացուցիչներին առաջարկում է զինուորական օթոմոբիլներով հեռանալ քաղաքից:

Երբ որ մանրամասնութիւնը իմանում են Շուշուայ վաճառականներն ու արհեստաւոր-